ԴԻՍԵՐՏԱՑԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1951 թ. փետրվարի 14-ին կայացավ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի նիստը, որտեղ լսվեց Պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Հակոբ Թագվորի Նալբանդյանի «Արաբների վարչական և հարկային քաղաքականությունը Հայաստանում» (8-րդ դարի սկզբից մինչև 9-րդ դարի կեսը) դիսերտացիայի հրապարակային պաշտպանությունը։

Որպես պաշտոնական օպոնենտներ հանդես եկան պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Միքայելյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Հ. Հարությունյանը և Ռ. Առաքելյանը։

Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը Հակոբ Թագվորի Նալբանդյանին շնորհեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Լ. Մ.